

Վ. ՏԵՐՑԱՆԻ «ԵՐԿԻԲ ԴԱԼԻՐԻ» ԵՎ «ՄԹՆՇԱՋԻ ԱՆՈՒՐՉՆԵՐ»  
ՇԱԼԻՔԵՐԻ ԳԵՂԱՐԳԵՇՏԱԿԱՆ ԱՄՅՈՒՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Աշխարհի ամբողջականությունը, ըստ վաղուց արտահայտած մտքի, հակերժական առեղծված և հրաշք է, դա մարդկային բանականությունից վեր է: Նույնպիսի առեղծված և հրաշք է նրա հետ կապված և նրան ենթարկվող գրական երկի գեղարվեստական ամբողջականությունը, նույնիսկ եթե այն վերլուծականորեն մասնատված է, ընդ որում՝ որոշ դեպքերում բնավ ոչ այնպիսի մասերի, որոնցից իրականում բաղկացած է: Այդ պարագորսը իր ամբողջ էությամբ և ձևաբովանդակային հիմքով պայմանավորված է գրական տեքստի և գեղարվեստական գիտակցության ֆեռմենով: Իսկ գեղարվեստական գիտակցությունը մարդկային գիտակցության ամենաբարդ ձևն է, և նրա մեջ ամեն ինչ ճակատագրորեն անկրկնելի ու անվերաստեղծելի է:

Գրական երկի ամբողջականությունը կարող է ստեղծվել միասնական միշտական պատկերով, եթե նույնիսկ այդ պատկերը ավերված, պատառությամբ, մասնատված կամ մղված է զեղությամբ արտատեքստային իրականությունը, ենթագիտակցության կամ անգիտակցության գաղտնարանը: Գրական երկի մեջ այն կարող է իրացվել որպես կյանք, բայց կարող է նաև լինել կյանքի կարծրությունից ճակատագրորեն հեռացված:

Իր մեջ անմնացորդ ավարտված և միևնուն ժամանակ անվերջորեն աշխարհի մեջ ընկղմված գրական երկում, որը սեփական ամբողջականության մեջ միավորում է բոլոր բաղադրատարրերը՝ առանց դրանց իմաստի կորցութիւնի, հնարավոր է ամբողջականության «բաց» և հանդգնորեն անքմահաճ կամ, ընդհակառակը, «փակ» և թաքցված քայլայում, որը անակնկալ կերպով դառնում է գեղարվեստական գիտակցության նոր մակարդակի վրա գտնվող եղակի ամբողջականության մեկնակերպ՝ իր թաքնված կամ բաց տարբերակներով: Այստեղ նույնիսկ հեգելյան «ինքնաքայլայումը» կարող է դառնալ ինչ-որ փոխարերական ամբողջականության ձև, որը միաժամանակ և ներդաշնակ է, և ուշ:

Գրական երկը երթեմն ինքը չի համընկնում իր հետ, իր սեփական իմաստի հետ, և նույնիսկ մեծ դիմակայության մեջ է ինքն իր հետ և հաճախ հենց այդ համընկնելու կետում է «տեղավորվում» գրական երկի ոչ միայն անձնական ու գեղարվեստական, այլև նաև աղդային ինքնությունը:

Հեղինակը գրուկան երկում առկա է նրա ամբողջականության մեջ՝ նրա տեքստի և արտատեքստային իրականության մեջ, նրա համամարդկային և ազգային բովանդակության մեջ, որը միշտ ուղղված է դեպի գրականության համաշխարհային անընդհատությունը: Գրական երկի հեղինակը գոյություն չունի այդ ամբողջականության ոչ մի առանձնացված պահի մեջ, «նա գտնվում է այն շառանձնացված պահի մեջ, որտեղ բովանդակությունը և ձեզ անխղելիութիւնը միաձուվում են» (Մ. Բախտին):

Գրական երկի և նրա ամբողջականության մեջ երթեմն «զուգակցվում են» երկու ամբողջականություններ, և այդ միահյուսումից բխում է նրա բացարձակ ամբողջականությունը, ամբողջականություն՝ որպես իսկության ստեղծում և ամբողջականություն՝ որպես իսկության բալքարում: Այդ ամբողջականություն,

Ների երկմիասնությունը դոյցատևում է զրական երկում որպես իրակությունների կամ ուրվականների աշխարհ, որպես կյանքի իրականացում կամ զգաւական հիշողություն (գեղարվեստական տեքստի ուսումնասիրության մեջ բոլոր մոլորությունները իրականում կապված են այն բանի հետ, որ այդ տեքստը շնթերցվում է որպես միաշերտ-հոմոգեն-երևոյթ կամ կեցության դոյցառում):

Այդ երկմիասնությունը երբեմն գոյատևում է ինչպես «բարձրացված», այնպես էլ «զրոյական գրության» (Ռ. Բարտ) ձևով: Երկու դեպքում էլ զրական երկի ձեր կարող է լինել վերջնասահմանորեն վերացական և միւնոււն ժամանակի վերջնասահմանորեն կոնկրետ-զգայական, և հենց այդ ձևն է, որը կերտում է ոճի բոլոր «հեղհեղություններն» ու «քմահանությունները» և փոխակերպվում է տեքստի մեջ մերթ ազատության տարերքի, մերթ ոռծի տաժանքի: Երկու դեպքում էլ գեղարվեստական միտքը, երկի մտահղացումը «ավելացվում է» իր նշանակության մեջ, անկախ այն բանից, թե դա կեցության անխուսափելիություն է, թե ողբերդական պատահականություն:

Տերյանի «Մթնշաղի անուրջներ» բանաստեղծական շարքի շատ բանաստեղծությունների և ամբողջ շարքի ամբողջականությունը ստեղծվում է մենակության միասնական միջանցիկ պատկերով և նրա հետ ձուլվող ու միասնություն կազմող մոռացության պատկերով: Ու թեև այդ պատկերները ինքնատինյան բազմադեմ և բազմամակարդակ են և երբեմն ներքնապես ինքնաբարայված, դրանք գեղարվեստական գիտակցության, ենթագիտակցության հոսքի մեջ, որոշ դեպքերում անգիտակցության ոլորտում ստեղծում են միասնական և միջանցիկ մենակության-մոռացության պատկեր, որն իր հերթին արարում է Տերյանի բանաստեղծության և ամբողջ շարքի ամբողջականությունը (եթե նույնիսկ բառերը այստեղ կրում են սեմանտիկորեն ամբիվալենտ բնույթ):

Վերջին սահմանում տանջվող բանաստեղծի անձնական աշխարհը կարծես թե սպառում է ինքն իրեն, կարծես թե անմնացորդ արտահայտում է մենակության-մոռացության պատկերի ամբողջականությունը «Մոռանա՛լ, մոռանա՛լ...» բանաստեղծության մեջ:

Մոռանա՛լ, մոռանա՛լ ամեն ինչ,  
Ամենին մոռանալ.  
Չըսիրել, շխորհել, շափոսալ—  
Հեռանալ...  
Այս տանջող, այս ճնշող ցավի մեջ,  
Գիշերում այս անշող  
Արդյոք կա՞ իրիկվա մոռացման,  
Մոռացման ոսկե շող...  
Մի վայրկան ամենից հեռանալ,  
Ամենին մոռանալ.—  
Կավարում, ցավիրում քարանալ  
Մեն-միայն...  
Մոռանալ, մոռանալ ամեն ինչ,  
Ամենին մոռանալ.  
Չըսիրել, ըրտենչալ, յրկանչել,  
Հեռանա՛լ...

Սակայն սա պատկերի թվացյալ և խարուսիկ սպառվածություն է, որովհետեւ, բայց էության, Տերյանի բանաստեղծական շարքերի բոլոր բանաստեղծություններում, որոնք արտահայտում են այդ պատկերը, ան խորանում է, բնդայնվում ու հարստանում նոր աշխարհներով և նորովի «ծածկում» սեփական տարածությունը: Այս բանաստեղծության, նրանում արտահայտված ու թե առօրեական, այլ դեղարվեստական գիտակցության մեջ ոչ միայն մոռացության հասկացությունը և պատկերը, ալ նաև «մոռանալ» բառը իր իմաստալին, դարձվածարանական, հնչերանդային և ձախալին որակիով (այն իբրև կրկներդ

Հյուսված է բանաստեղծությանը) իր մեջ, իր ամբողջ համակարգում պարունակում է բոլորովին ուրիշ բովանդակություն, քան թե, ասենք, ուստերեն «զանաբան» կամ «ոզանաբան» բառերը և դա կապված է մոռացության էության հետ, որի խորքում էլ դուատենում է աշխարհի տերյանական ազգային պատկերը Ռուսերեն մեկնակերպում այդ մոռացությունը տրված է մեկընդմիշտ և միանգամից, այն ունի իր սկիզբը և իր վերջը, հայերեն մեկնակերպում այն մոռացություն է, որը նախասկզբնական և հավերժ է, չունի ո՛չ սկիզբ, ո՛չ վերջ և ողջ տիեզերքում կանգնած է մենակի: Եվ տերյանական մոռացության հենց այս տիեզերականության մեջ (գուցե դա տրամաբանական պարագորս է) ապրում է աշխարհի աղղային պատկերը, որը կապված է երկրի ճակատագրի, նրա պատմության և պատմության փիլիսոփայության հետ:

Բացի այն, որ «մոռանալը» բառը արտահայտում է բանաստեղծության հիմնական իմաստային, դարձվածաբանական, չնշերանգային, ծանային էությունը և ստեղծում է մոռացության միանդամայն առանձնահատուկ ազգային աշխարհի պատկերի մեջ ապրող և աշխարհի ազգային պատկերը արարող որակը, այն, լինելով բառ-բանակի և միենուն ժամանակ բանաստեղծական իրավիճակ, հայտնվում է բանաստեղծության ամբողջ կառուցվածքի հիմ.

**Տերլանի պլեղիայի ուստերեն թարգմանություններում** (նույնիսկ Ախմատովան իր թարգմանություններում ստեղծել է փայլուն ուստերեն ստեղծագործություններ, բայց ոչ համահանձարեղ թարգմանություններ) հայտնիում է տերյանական տեխնոտի ընդամենը դալուկ պատճեն՝ անհունութեան օտարված բնագրի կանքից, եթանի որ այդ պատճեն բնագրի ոչ թե ստվերն է, այլ ստվերի ստվերը, այստեղ անհետանում է առաջին հերթին հենց աշխարհի ազգային պատկերը, որը գուատեսում է Տերյանի՝ ամեն անգամ միակ բառի մեջ: Այդ բառը արտահայտում է և ծածուկ-խորհրդավոր մտերմիկություն, և դրա հետ միասին համաշխարհային կոնցեպցիա, և հենց այդ երկու իրավիճակներից է, որ ստեղծվում է աշխարհի ազգային պատկերը (Տերլանի թարգմանիչները, լսելով նրա սիմվոլիստական էության մասին, հարծակվել են նրա բանաստեղծությունների վրա «աղմկալի ամբոխով» և սկսել են պատառուել այդ բանաստեղծությունները զարասկզբի սիմվոլիստական կաղապարներով և դրա արդյունքն այն էր, որ Տերյանը նմանվում էր այս կամ այն, առավել հաճախ՝ միջին ուսու սիմվոլիստին, իսկ ավելի հաճախ և դա սարսափելի է, միենուն ժամանակ ուսու սիմվոլիստների մի ամբողջ շերտի):

**Տերյանի «Միջնադի անուրջներ»** բանաստեղծական շարբում միայնակության-մոռացության միասնական ամբողջականության մեջ միահյուսված են լոկալ ամբողջականություններ, որոնք արարում են այդ բացարձակ ամբողջականությունը (ամբողջականություն՝ իբրև իսկության ստեղծում և ամբողջականություն՝ իբրև իսկության բարյալում): Այդ երկու բանաստեղծական գեղարվեստական իսկությունները ստեղծվում են իրակություններով (գիշեր, մրթընչաղ, խավար, անձրեւ, քամի, աստղեր, իրիկուն, աշուն, մշուշ, անապատ, ցուրտ, մեկ, իրիկնաժմամ, վիճ, ճանապարհ, անդրւնդ, ստվեր, շշուկ, լապտեր, մոլորաշողիկ) և ուրվականներով (խորդրդավոր, ախրություն, անուրջ, տանքանք, ճակատագիր, մահ, երադ, տագնապ, կարոտ, կանչ, կախարդական, տրտունք, ճիշ, ուրվական, մողական, տրտմություն, անհունություն): Սա կանք է (տանջանք, ցավ, տագնապ, հարազատ, անծանոթ, կարոտ, հրաժեշտ, մոլար, ինենթ, հոգնածություն) և միինուն ժամանակ պրուստյան զգաւական հիշողություն և կորցրած ժամանակի ողոնում (հուշեր, խորհրդավոր, ճակատագիր, երադ, կանչ, հերթաթ, աղոթք, անդարձ, մոլորաշողիկ): Այստեղ անշափ էական է այն, որ բոլոր այս բառ-բանալիներին իրենց ամրողականության մեջ փոխներարկվում են միմյանցով, և հենց այս ֆենոմենը տվալ բառ-աւշխարհները շրջում և մղում է դեպի աշխարհի ազգային պատկերը, բանի որ իրակությունները ալմատե փոխարկորուն փոխարկվում, կերպարանափոխում են և ստանում ուրվականների տեսր, իսկ ֆանտամիները՝

իրակությունների տեսքը. Կյանքը փոխակերպվում է զգայական հիշողության և կորցրած ժամանակի որոնման, իսկ զգայական հիշողությունը ինքը կյանքն է՝ իր իրային, նյութական-տարածական գոյության մեջ։ Դա գեղարվեստորեն իրականացված է հավելյալ արտահայտվածության («որպես քնքուշ մութի թե...», «որպես տրտում Անապատում-Մենակություն, Մենակություն...») կամ «զրոյական գորոթյան» մեջ («Կընսութեմ անվերջ, կընսութեմ մենակ, Դու կփարվես ինձ թեկութ ճկուն...», «Արդյո՛ք մենակ էր նա էլ ինձ նման...»): Եվ ինչն է այստեղ նաև շատ կարեռո՞ր իրակությունները և ուրվականները այս տեքստերում գտնը-վում են էկզիստենցիոնալ-սահմանային իրավիճակում և այդ պատճառով իսկ ոներթափանցվում են» մեկը մյուսի մեջ՝ կորցնելով իրենց ճշգրիտ սահմանները և նույնիսկ ստվերանկարը՝ ձեռք բերելով խորը և ողբերգական փոխաբերական իմաստ (զտված իրակությունները նաև ուրվական խորհրդանիշ են՝ գիշեր, մթնշաղ, խավար, անձրե, աստղեր, իրիկուն, անծանոթ, օտար, աշուն, մշուշ, անապատ, ցուրտ, մեգ, վիճ, անդունդ, լապտեր, մոլորաշրջիկ, իսկ զըտված խորհրդանիշ-ուրվականները՝ նաև իրակությունները են՝ խորհրդավոր, տիրություն, անուրջ, տանջանք, ճակատագիր, մահ, երազ, ցավ, տագնապ, կարոտ, կախարդական, կանչ, տրտունջ, ճիչ, ուրվական, մողական, ստվեր, անհասություն, հուշեր, հեքիաթ։ այս ըոլոր բառերը Տերյանի պոեզիայում բառանալիներ են):

Հենց այդ պատճառով էլ այստեղ ձեզ վերջնասահմանորեն կոնկրետ և միենույն ժամանակ վերջնասահմանորեն վերացական է (օրինակ, աստղերը այստեղ և կոնկրետ են և վերացական՝ «Հավերժաբար իրար կասկած և բաժան...», «Միշտ իրար հետ, բայց միշտ բաժան և հեռու, Աստղերի պես և հարազատ, և օտար...»): Այս ձեզ ևս փոխաբերականորեն ռժանրաբեռնված է։ Հնայած որ ազատ է «բառերի բանաստեղծական հանդիսավորուց»:

Եվ համարյա թե անհնարին է բացահայտել տեսողականորեն, մտահայեցողաբար այս պոեզիայի ինքնության ոլորտը՝ վերջին բանաստեղծական, մարդկային և ազգային սահմանում։ Իսկ դա բնորոշ է իսկական մեծ արվեստագետներին։ Եվ Տերյանի պոեզիայի բանաստեղծական զաղտնիքներից մեկը այն է, որ այստեղ խոսքը, ամբողջ աշխարհում միակը լինելով հանդերձ, միաժամանակ բանաստեղծական իրավիճակ է, և այդ գաղտնիքին նախ և առաջ ենթարկվում են այդ պոետիայի բառ-բանալիները։

Արդեն «Մթնշաղի անուրջներ» մտերմիկ-բանաստեղծական շարքում մենակության-մոռացության պատկերի ամբողջ մարդկային ողբերգության մեջ, որը կարծես թե ցնցում է միայն ու միայն բանաստեղծին, հայտնվում է մի նոր երանդ; Որը ցնցում է երկրին, ժողովրդին, ազգեն։ Մենակության-մոռացության պատկերի մեջ ներգրավվում են հալրենի տունը, երկիրը, աղջը, և Տերյանի պոեզիայի աշխարհի ազգային պատկերը ծնվում է «այդ» և «ուրիշ» աշխարհ-ների միացման, միաձուլման մեջ։

Այդ «ուրիշ» աշխարհը, որը ամենակին ուրիշ չէ, արդեն տեքստային և արտատեքստային իրականության մեջ բանաստեղծորեն արտահայտվում է «Երկիր Նախիրի» շարքում։

Կյանքի հայտնությունը խառնվում է մեռյալ-սառեցնող ցրտի հետ, և մենակության-մոռացության պատկերի ժամանակոր դառնում է անժամանակ և մղում է դեպի պանխրոնիստ (համաժամանակ) և ախրոնիս (անդրժամանակ)։ որոնցից նորից ծնվում են պատկերի ժամանակը և բանաստեղծի ժամանակը, որոնք արարում են պատկերի նոր ամբողջականությունը։ Այդ ամբողջականությունը իր հերթին անցնում է սեփական կործանման և սեփական վերածննդի միջով։

Արդեն «Մթնշաղի անուրջներ» բանաստեղծական շարքում (նաև ուրիշ շարքերում) հնչում են հղանակներ, որոնք դառնում են սեփական հողից ու հայրենի տնից օտարացման և հեռացման բանաստեղծական իրավեճակներ («Ես անշատված եմ հալրենի հողից, Հալրենի տունը՝ իմ սրտին օտար...»), անհայտ ձանապարհի («Ինձ այրում է միշտ մի անհաղ թախիծ, Հալիտյան

դյութող անհայտ ճանապարհ...»), և մոռացված տան («Հայրենական տուն, հավետ մոռացված...», «Հավիտյան օտար, Հայրենակա՞ն տո՞ւն...», «Ավերված երազ—Հայրենակա՞ն տուն...») պատկերներ։ Այստեղ արդեն հնշում են այսպիսի մոտիվներ՝ օտար աշխարհի և օտարերկրացու օտարություն («Նա մի անձանոթ երկրի աղջիկ էր...», «Օտար մարդիկ քեզ սիրաբար ողջույն տան...»), խորթություն՝ ոչ խորթության խորթություն (աստղերի մասին—«Հավերժաբար իրար կապված և բաժան...», «Դու Հավերժաբար և հեռու և մոտ...»), կյանքի ամայություն («Որպես տրտում Անապատում-Մենակություն, Մենակություն...»), միայնակություն միայնակ ամրոխի մեջ («Թյուր մարդոց մեջ, Պաղ մարդոց մեջ...»), տիեզերական և երկրային ցուրտ («Երկրի ցրտում...», իսկ ավելի ուշ, «Գիշեր և Շուշեր» շարքի մեջ՝ «Ահ, այս ցուրտ երկրի անհայտում անհուն...»), ոչ թե լեռմոնտովյան առադաստր, որը որոնում է ոչ ազգային փոթորիկ, այլ մենավոր նավակ, որը փնտրում է ազգային հանդրվան («Մենավոր ու մոլոր մի նավակի...»):

«Երկիր Նախրի» շարքում այդ մոտիվները օրգանապես շարունակվում և ստանում են ավելի սրբած ողբերգական բովանդակություն։ Մենակություն-մոռացությունն այստեղ ոչ թե ինչ-որ տրամադրություն է, այլ նաև մարդու վիճակն է աշխարհում և միևնույն ժամանակ երկրի և ազգի վիճակը. այն ոչ թե էկաֆուտենցիոնալ շլացություն է մասնավոր իրականությունից կամ սարդապես էկղիսութենցիա, այլև աշխարհի ազգային պատկեր է՝ գեղի աշխարհը և ինքն իրեն շրրջվածության մեջ, եվ հենց այդ պատճառով այս պատկերը ներխուժում է ոչ միայն մարդու ազգային ճակատագրի, այլ նաև ժողովրդի ազգային ճակատագրի մեջ։ Աշխարհի ազգային պատկերը ծնվում է անձնական և միևնույն ժամանակ ազգային ողբերգության մեջ, աշխարհի կողմից լրված ժողովրդի ազգային գիտակցության մեջ և ապրում է միանգամայն առանձնահատուկ կրանքով, նրա մենավալիտետում՝ ոչ թե որպես հեռու կամ մոտիկ վերացականություն, այլ իբրև ողբերգական հիշողություն և ողբերգական իրականություն, իբրև «ամբողջ դարաշրջանի հմաստային բովանդակությունը» (Ավերնցել)։ Զպետք է մոռանալ, որ «Երկիր Նախրի» բանաստեղծական շարքը հիմնականում ստեղծված է 1915—1917 թթ.։

Հենց XX դարի աւս ահավոր ողբերգության հետ, որ հայ ժողովրդի համար կրում է ազգային աղետի բնույթ, կապված են մենակության-մոռացության հետ առնչող օտարության և պանդխտության թեմաները, որոնք մենակության և մոռացության աշխարհների ուղղակի «ժառանգներն» են։ Դա հայի և Հաւոց երկրի մենակությունն է («Որպես Լաերտի որդին, որպես Ուլիս մի, թողած և հող և տուն, Անդա ծովեր ու ցամաքներ ես—Ամեն տեղ օտար և անխնդում...», «Ճուրտ հեռուներում, անլուկի կրկեսների մեջ սրտով մոլոր»): Բայց բանն աւստեղ նույնիսկ ոչ թե «ուղղակի» տեքստի մեջ է, այլ բանաստեղծական իրավիճակի և բանաստեղծական մտածողության, բանաստեղծության սոհետիկայի և վերցապես, բանաստեղծի անկրկնելիության մեջ է, և հենց դա է, որ այդ ողբերգական թեմային հաղորդում է անկրկնելի ողբերգականություն։ Ինքը՝ օտարությունը, ստանում է տիեզերական մեծություն, և այդ տիեզերաւկան մեծության մեջ ապրում են աշխարհի ազգային պատկերը և այդ պոեզիայում արտահայտված ազգային ինքնությունը։ Պանդխտության և օտարության թեման զարմանալիորեն կռնկրութ և իրական է և նաև դառմանալիորեն վերացական-համբնդհմնուր. այն հավասարապես նլութական-տարածական է և փոխարերական՝ հայոց պատմության և ներկայի, հայոց ճակատագրի և պատմության ազգային հոսանքի մեջ, լրվածություն և շհասկացվածության մղմագանցում։

Այնպես անխինդ են և նըման լացին  
Երգերն իմ երկրի, այնպես տիրագին.  
Մեզ չի հասկանա օտարերկրացին,  
Մեզ չի հասկանա սառն օտարութին։

Այն մելամաղձիկ, լացող, միալար  
Ելևիները ներդաշնակ աւնպիս  
Եվ հարազատ են սրտին մեր մոլար.  
Հոգուն մեր բեկված, ավերված, հրկեզ...

Տեսնում եմ ահա գյուղերը մեր խեղճ,  
Եվ թուխ դեմքերն այն տիրության սովոր,  
Իմ ժողովուրդը անել վշտի մեջ,  
Երկիրն իմ անբախտ և աղետավոր:

Թող հնչե երգն այդ դառն ու ցավածին,  
Երգը հայրենի ցավագար ու հին,  
Մեզ չի հասկանա օտարերկրացին,  
Մեզ չի հասկանա սառն օտարուհին...

Այս բանաստեղծության մեջ հնչում են շորս գերիշխող թեմաներ՝  
ազգային անհասկանալիության («Մեզ չի հասկանա օտարերկրացին,  
Մեզ չի հասկանա սառն օտարուհին...»), ազգային վհատվածության  
և հոգու ազգային կիզաքածության («Հոգուն մեր բեկված, ավերված,  
հրկեզ...»), ազգային ցավի անվերջանալիության և ժողովրդի ազգա-  
յին ճակատագրական աղետի լայնության («Իմ ժողովուրդը անել վշտի մեջ, Եր-  
կիրն իմ անբախտ և աղետավոր...»), ազգային հնության և ողբերգության նա-  
խասկզենականության («Երգը հայրենի ցավագար ու հին...»): Բոլոր այս շորս  
թեմաները շարունակում, խորացնում և լայնացնում են մենակության-մոռա-  
ցության վաղեմի պատկերը, կարծես թե հավաքում ցրիվ եկած երանգները,  
սրում նրա ազգային գաղտնիքը: Այդ պատկերը դառնում է ավելի ազգային և  
ավելի տիեզերական, ավելի ճիշտ՝ ավելի ազգայնորեն տիեզերական և տիեզե-  
րականորեն ազգային, և հենց դրա մեջ է Տերյանի պոեզիայի՝ աշխարհի ազ-  
գային պատկերի ֆենոմենը, որն արտահայտում է ժողովրդի և այդ պոեզիայի  
ազգային ինքնությունը: Եվ այդ ամենը արտահայտված է ոչ թե բառերի, նը-  
րանց իմաստի, հասկացության, հնչյունային էության կամ նույնիսկ հուզա-  
կանության մեջ, այլ բանաստեղծությունների «թաքցրած» պոետիկայի մեջ և  
բանաստեղծի հանճարի ու նրա բանաստեղծական անկրկնելիության, բանաս-  
տեղծի աներեակալիքի համամարդկային և աներեակալիքի աղդային էության,  
ուրազապես նրա պոետական աներեակալիքության մեջ:

Երկիր նախիրի, որը դարձել է բանաստեղծական շարքի վերնագիրը, հնա-  
դարյան ոչ պատահականությունը ողբերգականորեն համարեց է: Համարեց է նաև  
նոյն հին ազգային տրտունչը, որը հավերժորեն օտար է աշխարհին.

Թեզ կը մնա միշտ օտար  
Նախրական իմ հոգին  
Եվ թախիծն աւս անդադար,  
Եվ սրտունչը հին:

Ոչ քարերը դարավոր,  
Ոչ գրերն ավեր  
Չեն պատմի բեզ վիշտը խոր  
Եվ երկունքը մեր:

Ու գանդերն աւս լալագին  
Մեռնող իմ երկրում  
Չեն հուզելու թո հոգին  
Տիրությամբ անհուն:

Եվ աւտեղ մենավոր երկրի պատկերում գծաղրվում է մենավոր հայի  
պատկերը և ֆենոմենը, «հայը աշխարհում» թեման՝ հայը մեռնող անժահ  
երկրում: Տերյանի պոեզիայում այդ անմահությունը ասպրում է դոնե այն պատ-

առողջ, որ հորինվել են այդ տողերը, բայց նաև այն պատճառով, որ այս աշխարհի ազգային պատկերի մեջ կա «ուխտավոր անդով, դարերի ժառանգ», մի հեղ նախրցի, որը զնում է անկանգ.

Եվ դա նոր ցոլացում և անդրադառում է հայոց ազգային մենտալիտեսի, որը պահպանում է ժողովրդին այն հնագույն, նորագույն և աժմյան խառնակ և խովահույզ, հավերժական անցումային ժամանակներում, իսկ եթե նույնիսկ իրադարձությունները և նպատակները վեհապանծ են, դա ողբերգություն է «գործը» մարդու համար. այդպես է եղել Պուշկինի «Պղնձե հեծյալը» պոեմի հերոսի հետո:

Հայմանական է նույնիսկ, որ դա իրականում այդպես էլ չէ, բայց ինձ թը-վում է, որ տերյանական այս մենակության-մոռացության պատկերի ֆենոմենը եղակի է և հազվագեց գուցք նաև այն պատճառով, որ եղակի և հազվագեց ի հայոց մեռնող-անմահ երկրի և հայ մեռնող-անմահ մարդու ճակատագիրը համաշխարհային մարդասիրության և բաղաբակրթության տարածություններում։ Տերյանական մենակության-մոռացության պատկերը պարունակում է իր մեջ առանձնահատուկ և անկրկնելի մարդկային, ազգային և համաշխարհային բովանդակություն։

Տերյանի մենակության-մոռացության պատկերում, նրանում արտահայտված համաշխարհային ամայության և օտարության մեջ հնչում են նաև երկու կարևոր եղանակներ՝ հայկական ներում և «վերք Հայաստանի», որոնք իրենց հերթին որոշակի լույս են սփռում հայ ժողովովի ազգային ճակատագրի և ազգային ինքնության վրա (մի անգամ նույնիսկ ասվել է, որ ներումը հայկական ազգային բնակության գլխավոր գիծն է, իսկ «վերք Հայաստանի»-ի մասին մեկ պատմել է Արովյանը, Բանաստեղծի վերքերը ուղղակի մեր աշքի առաջ փոխակերպվում են երկրի վերքերի։ Եվ դա Տերյանի պոեմիայի հրաշքն է. այդ հրաշքը հուշում է, որ հայոց երկրը գարերի ժառանգ է, և թերևս հենց դա է նրա փրկությունն ու ամմահությունը, շնայած որ հիմա «ամեն մի միտք» վերք է, շնայած որ երկիրը «վառված ու որբ» է, բայց, այնուամենայնիվ, երեւում է «մշուշի միջից—տեսիլ դյութական»։ Եվ ամեն անգամ թվում է, թե կա այդ երկրում ինչ-որ անվերջանալիորեն վերջին մի բան և որ անվերջանալիորեն վերջինն է նաև ինքը՝ բանաստեղծը («Սի՞թե վերջին պոետն եմ ես, Վերջին երգիչն իմ երկրի...»)։

Ու հանկարծ՝ «Եվ հնչում է որպես աղոթք Արքայական քո լեզուն», և դա նաև ժողովրդի անմահության իրակությունն ու նշանն է, որովհետեւ անմահ է հենց ինքը՝ այդ լեզուն։ Եվ որովհետեւ անմահ է սարսափելի մահկանացու մայրը՝ «Այստեղ է լացել իմ մայրը Մորմոքն իր և իր օրորը, Այստեղ այնպես անծայր է Կարոտն ու այնպես խոր է...», «Եվ մայրըս ահա հիվանդ, Մրսում է, արև ուզում, նսաած է հետո դրսում Անխոս ու մեղմ հնազանդ», «Եվ ծեր է մայրս այնքան, Փոքրիկ է—բարի մի մայր...»։ Եվ այդ հանճարեղորեն բանաստեղծական և նույր կերպարը բանաստեղծորեն «ծածկում է» աշխարհն ու երկրը, որը «յոթնապատիկ խոցված տիրամայր է», «կամավոր զոհ է», «խաշված մի երկիր է», որը «արքայաբար վեճ ու անպարտ է»։ Տերյանի գեղարվեստական աշխարհը արարվում է այդ կերպարներով ու պատկերներով, և հենց դա է բնութագրում բանաստեղծի բանաստեղծական ուժը և անկրկնելիությունը։

Բանաստեղծի, նրա գյուղի և նրա երկրի մենակությունը մենակությունների միակցություն է, և այդ միակցությունը զարգանում-դառնում է ազգային մենակություն վիճի եղերքին («Կանգնած եմ մոայլ վիճի եղերքին...»), և այստեղ թագավորում է մահվան պարը և ամեն ինչ միջտ թաքցված է մի նուրբ վարագույրով։

Տերյանի ողբերգականորեն անվերջանալի մենակության-մոռացության պատկերը անխուսափելիորեն ներխուժում է չարիքի անսահման իշխանության աշխարհը, որը ոչնչացնում է բարոյականությունը և «անցնում է» բռնության տիրությը, իսկ դա անխուսափելիորեն ծնում է այն իրողությունը, որը կուլպում է ազգային մենակություն, որը «զավթում» է դարը և «զավթված» է դարի

կողմից: Տերյանի պոեզիայում դա ոչ թե ինչ-որ գաղափար է կամ կոնցեպցիա, բանաստեղծական իրավիճակ, դա աշխարհ է, որը հյուսված, ստեղծված է միայնակությունից և ստեղծում է այն: Բացի այդ, դա պատասխան է այն շարիքի ու բռնության անսահման իշխանությանը, որը նախորոշում է հայ ժողովրդի պատմական ճակատագիրը, նրա պատմության փիլիսոփայությունը և ազգային ինքնության որոշ և որոշակի գծերը, և որը պայմանավորել է տերյանական միայնակության-մոռացության պատկերը, որովհետև այդ պատկերը արձագանքն էր հիշյալ պատմական շարիքի և բռնության անսահմանափակ իշխանության: Այդ պատկերը միևնույն ժամանակ ազգային մեծ դիմակայություն էր աշխարհին: Եվ այդ միայնակություն-մոռացությունը մարդու և երկրի վիճակ է և ոչ թե մենակություն-մոռացություն է, կյանքից դուրս, երբ կյանքը բնակեցված է բացակայող մարդկանցով:

Տերյանական միայնակության-մոռացության պատկերը ողբերգականորեն միացնում է քնարերգությունը (որպես գեղարվեստականորեն գիտակցված հույզ) և փիլիսոփայությունը (որպես գեղարվեստականորեն գիտակցված միտք), թայց տեսեք ի՞նչ պոտեհիկայով, ի՞նչ բանաստեղծական ոճով, ի՞նչ հնչյունայնությամբ և բառադասավորմամբ է պարում այս բարդագույն հանգույցը, որտեղ միանում են վերոհիշյալ գեղարվեստականորեն գիտակցված հույզը և միտքը («Ցրտահա՛ր, հողմավա՛ր, Դողացին մեղմաբար Տերևները դեղին, պատեցին իմ ուղին...»):

Առանձին երկի, բանաստեղծական շարիք աշխարհի ազգային պատկերում իրականացվում է գիտակցության անցումը անձնական համահուզականությունից և անձնական համատրամաբանության տարերթից դեպի ազգային համառերգականության տարերքը, և անցումը կատարվում է հենց այդ պահին, որտեղ ողբերգություն է դառնում ինքը՝ ժամանակը, ընդ որում իր նիմա և այստեղ գոյության մեջ ու նրա համաշխարհային և վերաշխարհային պանիրոնիայում:

Տերյանական աշխարհի ազգային պատկերը «կազմվում է» մտերմիկ, կարծես թե լոկալ և միևնույն ժամանակ գլորալ «մասերից», իսկ «գերագույն» ազգային միայնակություն-մոռացությունը, ինքը՝ միայնակություն-մոռացության ֆենոմենը և աշխարհը տրոհվում են բազմազան մենակությունների, որոնց նոր միացումը արարում է աշխարհի ազգային պատկերը՝ մենակությունը մենակության մեջ, մենակությունը, որը տանում է դեպի մենակություն, մենակությունը երկուսով, մենակությունը որպես նետվածություն աշխարհի անհայտությանը և մենակությունը որպես դիմակայություն աշխարհին, մենակության դուրալի, փաղաքշական արարումը և նրա դուրալի, փաղաքշական ավերումը, աստղային մենակությունը՝ հավերժական մոտիկության-հեռավորության և ոչ հանդիպան մեջ, մենակությունը որպես փրկություն և մենակությունը որպես կործանում, որպես ինքնամաքրում, և որպես հայտնություն որպես ազատություն և որպես գերություն կամ դատապարտվածություն ազատությանը, մենակությունը ամբոխի մեջ ու ամբոխի մենակությունը և մենակությունը մենավոր ամբոխի մեջ, մենակությունը որպես փախուստ աշխարհից և որպես փախուստ դեպի աշխարհը, որպես մոռացություն և որպես հիշողություն, որպես լուսություն և որպես ճիշ, որպես հրճանք և որպես հուսահատություն, որպես ճշմարտություն և որպես մոլորություն, որպես դիմապատկեր և որպես դիմակ, որպես անխուսափելիություն և որպես ընտրյալություն, որպես նզովք և որպես հատուցում, որպես ճակատագրական կանխորոշվածություն և որպես ինքնաստեղծում:

Եվ այդ մենավոր մենակությունների աշխարհը, երկրի, ժողովրդի և ազգի մենակությունը Տերյանի պոեզիայի մեջ արտահայտում են նաև մի ուրիշ, այս դեպքում արդեն ոչ ազգային գաղափար. մարդը միշտ միայնակ է:

Իրականության և պատկերի, իրերի էության և փոխարերության սինխրոն և դիախրոն, ախրոն և պանխրոն, տարածական և իրադարձային «հանդիպումների» դեպքերը և գեղարվեստական ու ազգային իմաստների միահյուսումը

Տերյանի պոեզիայում խորասուզված են ազգային ինքնուրունության և աշխարհի ազգային պատկերի մեջ և դրա հետ միասին համաշխարհական տարածության ու կոնտեքստի և այսպիսով՝ աշխարհի ամբողջականության մեջ:

Սասերի և ամբողջականության ճշմարիտ աեսունակությունը շատ դեպքերում հնարավոր է միայն արխտոաելյան իրավիճակում, երբ սկզբից իրի մասերը դիտվում են զատ-զատ, հետո դիտվում է այդ սասների կապը և վերջավես ընդունուրը՝ և գրականագիտության մեջ հավասարապես օրինաչափ են և վերլուծության բոլոր ճշգրիտ «գործիքների ամբողջությունը», և նրա «երազկոտ անձգրտությունը»:

Բանն այն է, որ մենակության-մոռացության լոկալ, ուղղակի դիտվող, անմիջականորեն ընկալվող, բացահայտ արտահայտված պատկերներից ոչ մեկը Տերյանի պոեզիայում, անկախ իրենց ամբողջականությունը և ավորավածությունից, չեն արտահայտում միայնակ սիմվոլիսմ անձնական, բանաստեղծական ու ազգային էությունը, և հետեւ վարար, աշխարհի ազգային պատկերը, որը տիպարանորեն շրջված է դեպի համաշխարհային գրականության որոշ երևույթներ և միտումներ (մասնավորապես նրա սիմվոլիստական «վարկածին»): Տերյանի միայնակության-մոռացության պատկերը իրենից ներկայացնում է «փոփանդրադրումների հարուստ համակարգ» և ինչ-որ իմաստով «կրկնում է գիտակցության պատմությունը» (Պ. Պալեսկի):

Մտենդալը մի առիթով աշտահայտել է այն միտքը, թե արվեստը անկում է ապրել այն պատճառով, որ չի ունեցել լայն համաշխարհային կոնցեպցիա: Արվեստը կարող է անկում ապրել նաև այն զենքում, եթե նրա մեջ չի արտահայտված աշխարհի ազգային պատկերը և ժողովրդի ազգային ինքնությունը (դրանց բաց կամ փակ ընթերցումներով): Տերյանի պոեզիան արտահայտում է այդ երկու աշխարհները, նվազ հենց այդ պատճառով էլ միայնակության-մոռացության պատկերի հետևում նկարագծվում է ժամանակի պատկերը և հենց ինքը՝ բանաստեղծի կերպարը. այս պատկեր-կերպարի մեջ դասականորեն զուգորդվում են եզակին, առանձնահատուկը և համընդհանուրը: Եվ հենց այդ եռամբնդիմանուրը Տերյանի պոեզիայում արտահայտում է աշխարհի ազգային պատկերի ֆենոմենը: Միայնակության-մոռացության անձնական-ազգային պատկերի մեջ տանջվում-տառապում է, բաշվում է իր մեջ և ինքը իրենից ելք է փնտրում աշխարհի ազգային պատկերը, որովհետև այդ մենակության-մոռացության պատկերը ծնված է ժողովրդի ազգային ճակատագրով, որը արարում է նրա մենտալիտետը և ի սկզբանե ու հավիտենապես պատված է շարիքի և բռնության ամենազորությամբ:

Եթե հիշենք Հյուգոյի խոսքերը այն մասին, որ Դանտեն ստեղծել է դժոխքը պոեզիայի օգնությամբ, իսկ ինքը փորձել է ստեղծել այն իրականության օգնությամբ, ապա, հավանաբար, կարելի կլինի ասել, որ Տերյանը իր մենակության-մոռացության պատկերում վառ լուսավորեց աշխարհի ազգային պատկերը և պոեզիայի, և իրականության օգնությամբ (այդ պոեզիան բանաստեղծորեն հաղվածեած է, և նույնպես առեղծված և հրաշք է, իսկ այդ իրականությունը բնութագրվում է այն բանով, որ ինքը՝ ժամանակը, ողբերգություն է):

Տերյանի մենակության-մոռացության պատկերը, լինելով ամբողջական, ամբողջականորեն ուղղված է դեպի աշխարհի ամբողջականությունը, այդ պատկերի տիպարանությունը (անտիկ դրամա, Հոմերոս, Շեքսպիր, Շոլտսոյ, Լերմոնտով, Ռիլկե, լատինամերիկյան վեպ), համաշխարհային գրականության անընդհատությունը, և, վերջապես, առհասարակ մենակության-մոռացության առեղծվածը և ֆենոմենը (միշտ միայնակ մարդու իրավիճակը և միշտ միայնակ աշխարհի իրավիճակը), եվ թվում է, որ տերյանական միայնակության-մոռացության պատկերը ապրում է ոչ միայն բանաստեղծի աշխարհազգացողության մեջ և պոեզիայում, այլ նաև ամենուրեք՝ աշխարհում: Այդ պատկերը անհուսալիորեն լուսապայծառ է և անհուսալի լուսապայծառությամբ պատում է աշխարհը ու ողբում է այդ աշխարհը:

Տերյանական պոեզիայի ամբողջականության մեջ կիզակետվում ու ողբերգականորեն խաչավորվում՝ են անձնական, ազգային և համամարդկային իմաստները, և այդ իմաստների հանդիպման մեջ ապրում է այդ պոեզիան:

Սարտը պնդում էր, որ Ֆլորերը գրել է միայն ինքն իր մասին; օթե Ֆլորերը կարող էր ասել, թե տիկին Բովարին հենց ինքն է, ապա Տերյանը կարող էր ասել. «իմ միայնակությունը-մոռացությունը հենց ես եմ, իմ երկիրն է, իմ ազգն է, իմ ժողովուրդն է»: Եվ հենց այդ իմաստների իմաստը և Տերյանի պոեզիաի անկրկնելիությունը և եզակիությունը փրկում են այդ պոեզիան և հինգեկադենտների «Այութի նզովքից», և նոր գեկադենտների «Ճեկ նզովքից»: Տերյանի պոեզիան ոչնչացնում է այդ երկու իրար ոչնչացնող նզովքների էռթունը, քանի որ այդ պոեզիայում ողբերգականորեն համընկնում են անձնականը իր համահուզականության մեջ և ազգայինը իր համառըբերգականության մեջ:

Ներկա հոդվածում վերլուծման նպատակով անխոսափելիորեն մասնատված է Տերյանի միայնակության-մոռացության պատկերի ամբողջականությունը, քանի որ մինչև շմասնատվի այդ պատկերը, նրա գիտարկումը իբրև մի անտրոցների ամբողջականություն՝ չի պարզի նրա էությունը, ինչպես նաև այդ էությունը չի պարզվում, եթե նորից շվերամիացնես և շվերածնես ամբողջականության մեջ գործող այդ մասնատված մասերը։ Մանավանդ որ նույն ժամանակներում, ավելի շուտ և ավելի ուշ, այդ և որիշ պատմական, ազգային, փիլիսոփայական, բարոյական և գեղագիտական տարածություններում այդ պատկերը տանջալիորեն ապրել է ամենասոսկալի և աներևակայելի «արկածներ» և կերպարանափոխություններ, ասենք, Սարտրի գիտակցության մեռելային անսասանության լաբիրինթոսներում կամ Յասպերսի էկզիստենցիոնալ պալծառացման հանդեսի թագավորությունում, կամ համաշխարհային ղեկադանսի սարսափելի հավերժագական նախահավաքերժականության մեջ, կամ Մարկեսի վերացական-համընդհանուր և միենալուն ժամանակի հրեշտական ուսաբեական «հարյուր տարվա մենության» մեջ (ի դեպ, բացարձակապես ազգային այս միայնակությունը, նույնիսկ ստեղծելով աշխարհի ազգային պատկերի երանգները, այնուամենայնիվ, չի արտահայտել ազգի ճակատագիրը և մենտալիտետը և չի նկարագրել մի իրավիճակ, երբ ինքը՝ ժամանակը, դառնում է ողբերգություն։

Տերյանական միայնակության-մոռացության ազգայնորեն բացարձակ պատկերը չի կրկնում, օրինակ, լերմոնտովյան մենավոր առաքաստը, մենավոր սոճին, մենավոր բանտարկյալին, մենավոր, մոռացված ամբողխին, մենավոր հին ժայռը, կաղնու մենավոր տերեւը, միայնակ Դեմոնը, միայնակ Պետրինին, որի ողբերգությունը մենակությունն էր, միայնակ Լերմոնտովին, որը կարծես թե սպանված էր բարեկամների դավադրության հետևանքով։ Այս ողբերգականորեն կայուն-անկայուն պատկերների մեջ, որոնք «անտանելիորեն» ոռւսական են, այնուամենայնիվ, չկա ոռւսական ազգակին ինքնության արտահայտություն և չկա երկրի, ազգի, ժողովրդի ճակատագիրը (շնայած որ Տերյանի «Երկիր Սահմանի» շարքի բնաբանը վերցված է Լերմոնտովից)։

Զեխովզյան պերսոնաժների միայնակությունը-մոռացությունը ողբերգական է տիեզերականորեն և ազգայնորեն, և այդ ողբերգականությունը միացնում է «բակության մոգական ուժը և շեխովզյան պիհսների աբսոլուտը», նշանակությունների միստիկ խաղը և մարդու վեճը իրականության, մահի և չփոյության հետ: Եվ սակայն այս ամենը մի կողմ է թողնում երկիրը, ազգը, ժողովուրդը: Տերյանական մենակության-մոռացության պատկերի պանխրոնիայում և ափրոնիայում ապրում է բանաստեղծի ժամանակը և ազգի ժամանակը՝ «ապրելու ժամանակը և մեռնելու ժամանակը»: Տերյանի պոեզիայում ազգային ժամանակները ողբերգականորեն պատկերվում են ու առաջանաւում:

Տերյանի պողովայի տեքստում, «ոչ-տեքստում» և «ուրիշ-տեքստում» ապրում է հայ մարդը, որը աշխարհում իրեն հայ է զգում, եվ դա հայ մարդու պատմական ձակատագիրն է, և այդ ձակատագիրը անկրկնելի է և անվերաբ

տաղրելի: Այսպիսին է հայ ժողովրդի պատմությունը, նրա պատմության փիլիսոփայությունը, մենատակատեր և աղջային ինքնությունը:

Ելուակս ուրեմն, Տերյանի «Մինչաղի անորդներ» և «Երկիր Նախրի» բանաստեղծական շարքերում «Թագավորում է» միայնակության-մոռացության պատկերը (իր գեղարվեստակիմաստային և պոետիկական նշանակությամբ)՝ այդ պատկերի բառ-բանալիներում, բանաստեղծական տրամադրության մեջ, այդ պոեզիայի գեղարվեստական աշխարհում, բանաստեղծության ամբողջականության մեջ, որը ուղղված է գեղի աշխարհի ամբողջականությունը, աշխարհի ազգային պատկերը և ազգային ինքնությունը: Եվ այնուամենակվ պետք է ասել, որ կա մի կարևորագույն հանգամանք, որը մյուս բոլոր «բաղդրիների» հետ միասին խաղում է գեղարվույն դեր այդ պատկերի և այդ պոեզիայում արտահայտված աշխարհի ազգային պատկերի մեջ:

Տերյանի պոեզիայում միշտ կա շերեացող մի պահ, որը թաքցնում է իր մեջ անցումը անձնական-բանաստեղծական աշխարհից գեղի ազգային աշխարհը: Տերյանի պոեզիայի աշխարհից ազգային պատկերը ասրում է հենց այդ անցման պահի մեջ: Այդ պահը գեղարվեստականորեն դոյատեսում է նույնիսկ այն գեղքերում, երբ չկա միայնակության-մոռացության աեսանելի պատկերը, երբ չկան բանալի-բառեր և նույնիսկ ընդհանրապես բառեր մենակության կամ մոռացության մասին:

Ես գերադառնում եմ երկու, արդեն հիշատակված բանաստեղծություններին այդ անցման պահը զգայականորեն և տրամաբանորեն ընկալելու համար («Քեզ կըմնա միշտ օտար...» և «Այնպես անխինդ են և նըման լացին...»):

Առաջին բանաստեղծության մեջ կա այսպիսի մի տող. «Քեզ կըմնա միշտ օտար Նախրական իմ հոգին...»: Բացարձակապես պարզ է, որ այս տողը հենց վերոհիշյալ անցման պահն է, որի մասին խոսք եղավ և որի մեջ խոսք է գնում բանաստեղծի անձնական և ազգային դրամայի մասին: Դա այն աստիճան ակներեւ է, որ նույնիսկ հնարավոր չէ ապացուցել կամ փաստարկել այն, անկախ այն բանից, թե ում են հասցեագրված այդ խոսքերը (ի գեպ, այդ տեքստի սկզբնական տարրերակում այն ուներ այսպիսի տեսք. «Ձեզ կըմնա միշտ օտար Նախրական մեր հոգին...»): Հետևաբար, դարձնելով խոսքը ավելի անձնական և մտերմիկ, բանաստեղծը բառերին հաղորդել է ավելի ընդհանուր, խոր և ողբերգական իմաստ, և սրել է «անցման պահի» պահը: Համանման երեւույթ է «Այնպես անխինդ են և նըման լացին...» բանաստեղծությունը, որտեղ կան հետևյալ (ի գեպ կրկնվող) տողերը. «Մեզ չի հասկանա օտարերկրացին, Մեզ չի հասկանա սառն օտարուհին...»: Այստեղ նույնպես ապրում և տառապում է նույն անցման պահը, որի մեջ չկան ոչ միայնակության-մոռացության պատկերի հիշատակումը կամ նույնիսկ նրա «նիշը», ոչ չել այդ պատկերին «պատկանող» բանալի-բառերը: Եվ, այնուամենանիվ, պատկերը իր մեջ պարունակում է անձնական և տիեզերական, ազգային և տիեզերական իմաստ և իմաստների հանդիպում: Եվ այստեղ տեղի է ուննում ևս մի «անցում»՝ բանաստեղծի աշխարհազգացողությունը անցնում է ազգային ինքնության ոլորտները: Եվ հենց դա է, որ բնութագրում է բանաստեղծության ոչ թե արտաքին տեքստային, այլ գեղարվեստական իմաստը, որն իր հերթին պայմանավորում է գրական երկի գեղարվեստական աշխարհը:

Տերյանի պոեզիայում և նրա միայնակության-մոռացության պատկերում բանդվում է «Էթիկական ինդիվիդուալիզմը» և հանգես է կատարում «Հոգեոր արիստոկրատիզմը», որը ծնել է Տերյանի «Հոգեոր Հայաստանի» վեհ գաղափարը: «Հոգեոր Հայաստանի» գաղափարը ապրում է մեր ազգի ազգային պատմության բոլոր կործանարար և կորստաբեր կեռմաններում ու իրադրություններում, ամեն անգամ հաղորդելով այդ պատմությանը ինչ-որ հավերժական նախահավերժություն: Տերյանական միայնակության-մոռացության պատկերը կրում է իր վրա մի տեսակ ֆենոմենոգիական խաչ, որի շորս ծայրերը շրջված են գեղի ազգային պատմությունն ու ճակատագիրը, աշխարհի ազգային պատկերը, ազգային մենատակատերը և ազգային ինքնությունը:

ХУДОЖЕСТВЕННАЯ ЦЕЛОСТЬ ПОЭТИЧЕСКИХ ЦИКЛОВ  
В ТЕРЬЯНА «СТРАНА НАИРИ» И «ГРЕЗЫ СУМЕРЕК»

*Академик НАН РА АРАМ ГРИГОРЯН*

Р е з ю м е

Художественная целостность поэтических циклов Терьяна «Грезы сумерек» и «Страна Наири» творится единым, сквозным образом одиночества-забвения, даже когда этот образ, казалось бы, внутренне разрушен или сдвинут в сторону тайников подсознания. Он порою как бы не совпадает с самим собой, и тогда жизнь этого образа протекает именно в точке его несовпадения с самим собой. Этот образ глубоко мифологичен, и вместе с тем он осуществляется как жизнь и гаит в себе личную и национальную трагедию—на рубеже веков для армян трагедией становилось само время. В целостности поэтического текста Терьяна и в образе одиночества-забвения его поэзии преодолевается модный тогда этический индивидуализм и рождался аристократизм духа, явившийся предтечей терьяновской идеи «Духовной Армении», которая сообщала всей армянской истории и культуре какую-то извечную неповторимость. Терьянновский образ одиночества-забвения несет на себе некий феноменологический и личностный крест, четыре конца которого обращены к национальной истории и национальной судьбе Армении, к национальному ченталитету народа и к его национальной самосущности.